ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.07.2013թ.
204-ի 7

"Ավտոբուս" ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Արամ Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրե հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ վարորդ է աշխատում "Ավտոբուս" ՓԲԸ-ի կողմից սպասարկվող երթուղիներից յուրաքանչյուրում (խնդրում ենք յուրաքանչյուր երթուղու վարորդների թիվը նշել առանձին),
2. Որքա՞ն է կազմում "Ավտոբուս" ՓԲԸ-ի կողմից սպասարկվող երթուղիներից յուրաքանչյուրի վարորդների աշխատավարձը (խնդրում ենք յուրաքանչյուր երթուղու վարորդների աշխատավարձի չափը նշել առանձին),
3. Խնդրում ենք տրամադրել "Ավտոբուս" ՓԲԸ-ի կողմից սպասարկվող երթուղիների բոլոր վարորդների աշխատանքային պայմանագրերի պատճենները՝ վարորդների անունը, ազգանունը, ծննդյան թիվը, հասցեն եւ անձնագրային տվյալները ծածկած: Խնդրում ենք պարտադիր տրամադրել (չծածկել) պայմանագրի՝ վարորդի վարձատրությունը սահմանող հատվածը, քանի որ վարորդի ինքնությունը չհայտնելու դեպքում դա այլեւս չի լինի անձնական կյանքի անձեռնմխելիության խախտում, քանի որ հայտնի չի լինի անձը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն տնօրինող են նաեւ ... տրանսպորտի ... ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները (որպես հանրային նշանակության կազմակերպություն): Ուստի, "Ավտոբուս" ՓԲԸ-ն տեղեկություն տնօրինող մարմին է եւ պարտավոր է պատասխանել մեր հարցմանը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց ***հետո 5-օրյա ժամկետում:*** Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան